ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 39-րդ հոդվածի 5-րդ մասում «վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով» բառերը փոխարինել «վճռաբեկ դատարանի քրեական պալատի երեք դատավորի կազմով» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ կետը.

«1.1)մեղադրական դատավճիռը կայացվել է ապացույցների բավարար ամբողջությամբ չհիմնավորված խոստովանական ցուցմունքի հիման վրա»:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 407-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը:

Հոդված 4. Օրենսգրքի 414.1-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 414.1 Վճռաբեկ բողոքը վերադարձնելը կամ առանց քննության թողնելը

1.Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 407 հոդվածի պահանջներին:

2. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե

1) բողոքը վճռաբեկ դատարանի սահմանած ժամկետում չի համապատասխանեցվել սույն օրենսգրքի 407-րդ հոդվածի պահանջներին.

2) բողոքը բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը.

3) բողոքը ժամկետանց է.

4) բողոքարկվել է բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ.

5) բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացվել.

6) բողոքը բերվել է 375.4 -րդ հոդվածի պահանջի խախտմամբ:

3.Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ սահմանում է երկշաբաթյա ժամկետ՝ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար՝ նշելով առկա թերությունները:

4. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում»:

Հոդված 5. Օրենսգրքի 414.2-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 414.2.Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե գալիս է հետևության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) առերևույթ թույլ է տրվել կոպիտ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, եթե՝

1) նույն հարցի վերաբերյալ առկա են ստորադաս դատարանների առնվազն երկու միմյանց հակասող դատական ակտեր, կամ

2) նույն հարցի վերաբերյալ առկա են ստորադաս դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ միմյանց հակասող դատական ակտեր, կամ

3) բողոքարկվող դատական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանը, կամ

4) բողոքարկվող դատական ակտն հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ

5) ստորադաս դատարանը հիմնվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության օրենքը, կամ

6) վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավակիրառ պրակտիկայի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի իմաստով կոպիտ են համարվում հետևյալ դատական սխալները՝

1) մեղադրյալի արարքին տրվել է սխալ իրավական գնահատական, կամ

2) թույլ է տրվել սույն օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ քրեադատավարական օրենքի որևէ խախտում:

4. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում

5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո վճռաբեկ դատարանը որոշմամբ կարող է կասեցնել դատական ակտի կատարումը:

6. Վճռաբեկ դատարանի որոշումները պատշաճ ձևով ուղարկվում են բողոք բերող անձին, իսկ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումները՝ դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի)»:

Հոդված 6. Օրենսգրքի 414.3-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 414.3.Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը

1.Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե՝

1) բացակայում են սույն օրենսգրքի 414.1-րդ հոդվածով 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերը, և

2) բացակայում են սույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

2.Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը»:

Հոդված 7. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 414.4-րդ հոդվածով.

« Հոդված 414.4. Վճռաբեկ բողոքի պատասխանը

1.Դատավարության մասնակիցը, ստանալով վճռաբեկ բողոքի պատճենը, մինչև վճռաբեկ դատարանում գործի քննությունն սկսելը իրավունք ունի իր պատասխանն ուղարկելու վճռաբեկ դատարան: Դատավարության մասնակիցը վճռաբեկ դատարան պատասխան ուղարկելու հետ միաժամանակ պետք է պատասխանի պատճենն ուղարկի նաև դատավարությանը մասնակցող անձանց (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի): Պատասխանը ստորագրում է այն ներկայացնող դատավարության մասնակիցը կամ նրա լիազորած անձը»:

Հոդված 8. Օրենսգրքի 422-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ կետը.

«5.1) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության հիմնավորումը »:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: